

ԿԱՐԳ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂԶՄԱՆ

1. Եվրասիա միջազգային համալսարանի ուսանողի ուսման վարձի զեղչման կարգը սահմանվում է Եվրասիա միջազգային համալսարանի կանոնադրությամբ և սույն կարգով:

2. Ուսանողական զեղչը Եվրասիա միջազգային համալսարանի բյուջեի ծախսային մասում նախատեսված ֆինանսական միջոցների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ուսանողի ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցումն է:

3. Ըստ Եվրասիա միջազգային համալսարանի մասնագիտությունների՝ համալսարանի կողմից հատկացված ուսման վճարի փոխհատուցման ուսանողական զեղչերի քանակն անփոփոխ է:

4. Ուսման վճարի լրիվ փոխհատուցում՝ ուսանողական նպաստի ձևով, Համալսարանի կողմից տրամադրվում է

4.1. առաջին կարգի հաշմանդամ ուսանողներին,

4.2. ընդունելության երկու քննություններից 38 և ավելի միավոր ունեցող դիմորդներին /20 միավորանոց գնահատման համակարգով/ :

5. Սույն կանոնակարգի 4-րդ կետով նշված անձանց նպաստները՝ ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ, փաստաթղթերի առկայության դեպքում ձևակերպվում և տրամադրվում են 1-ին կուրսի սկզբում և պարտադիր կարգով վերանայվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում:

6. Եվրասիա միջազգային համալսարանը, ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ, ուսման վճարն ուսանողական նպաստի ձևով զեղչում է հետևյալ կարգավիճակ ունեցող անձանց (սահմանված կարգով վավերացված համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում)։

6.1. սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների), երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների, ինչպես նաև երկկողմ ծնողազուրկ ուսանողները զեղչվում են ուսման վարձի 20 տոկոսի չափով,

6.2. միակողմ ծնողազուրկ ուսանողները՝ 15 տոկոս,

6.3. վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողները՝ 15 տոկոս,

6.4. ԼՂ պատերազմի մասնակցի երեխաները 10 տոկոս, զոհված ազատամարտիկի երեխաները՝ 20 տոկոս,

6.5. բանակից զորացրված ուսանողները՝ 10 տոկոս,

6.6. մինչև երկու տարեկան երեխա ունեցող ուսանողները՝ 15 տոկոս:

7. Սույն կարգի համաձայն՝ ուսանողական բոլոր տեսակի զեղչերից օգտվելու համար դիմումներն ընդունվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում: Դիմումների քննարկումը կազմակերպվում է ընդունող հանձնաժողովի կողմից: Դիմումների ընդունման վերջնաժամկետի ավարտից հետո քննական կամ ստուգարքային պարտքեր ունեցող ուսանողների դիմումները ենթակա չեն քննարկման:

8. Հարգելի պատճառով (ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի, զինծառայության մեկնելու կամ ուսանողական փոխանակման ծրագրերով արտասահման ուսումնառության գործուղվելու կապակցությամբ) ուսումնառությունն ընդհատած ուսանողի վերականգնման դեպքում պահպանվում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը:

Վերջին հանգամանքը պարտադիր կարգով նշվում է ուսումնառության ընդհատումը ձևակերպող հրամանում: